



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

14 Փետրուարը Տեառնընդառաջի տօնն է, որ կը յիշատակէ Մանուկ Յիսուսի տաճար ընծայումը:

Չորեքշաբթի, 13 Փետրուարի երեկոյեան, Արեւմտեան Թեմի մեր եկեղեցիներէն ներս յատուկ արարողութիւններով ու աւանդական հանդիսութիւններով նշուեցաւ Տեառնընդառաջի նախատօնակը, որուն յաջորդեց աւանդական խարոյկի հրավառութիւնը:



Թեմիս քարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսապետեց եւ օրուան խորհրուղով իր պատգամը փոխանցեց Կլենտոյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեանց, որոնց մասնակից եղաւ Բերիոյ Թեմի նախկին Առաջնորդ՝ Գերշ. Ս. Սուրբէն Արք. Գաթարոյեան, որ հիւրաբար մեր Թեմը կը գտնուի:

Ներկայ էին նաեւ Ազգային Առաջնորդարանի քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներ՝ Գերպ. Ս. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան եւ Յոգշ. Ս. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւները, հոգաբարձութեան անդամներ, Զ.Ս.Ը.Ս.ի Շրջ. Վարչութեան անդամներ, Թեմիս Երիտասարդաց խմբակի ներկայացուցիչներ եւ Զ.Ս.Ը.Ս.ի խմբապետական կազմերն ու բազմահարիւր հաւատացեալներ:

Նախատօնակի արարողութենէն ետք, եկեղեցւոյ շրջափակին մէջ աւանդական խարոյկը վառեցաւ եւ հայրենասիրական ու ազգային երգեր երգուեցան:

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազանը, ներկայ հոգեւորականները, հոգաբարձութեան անդամներ, Զ.Ս.Ը.Ս.ի եւ եկեղեցիներու Երիտասարդական միութեանց անդամները «Արմենակ Տեր Պետրոսեան» սրահին մէջ համախմբուեցան սիրոյ սեղանի շուրջ, հիւրընկալութեամբ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան:

EVE OF THE FEAST OF THE PRESENTATION OF OUR LORD CELEBRATED AT ST. MARY'S CHURCH

On the evening of Wednesday, February 13th, the eve of the Feast of the Presentation of our Lord to the Temple was celebrated in Prelacy Churches with special services and the traditional bonfire.



H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the service and delivered the sermon at St. Mary's Church in Glendale. Participating in the service was former Prelate of the Aleppo Diocese H.E. Archbishop Souren Kataroyan, Christian Education Department Directors

Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, parish priests, and hundreds of parishioners. Also in attendance were members of the Board of Trustees and youth groups, as well as Homenetmen Regional Executive members and scouts.

Following the service, clergy and faithful headed to the church courtyard where the traditional bonfire was lit and around which nationalistic songs were sung. After the festivities around the bonfire, a reception was hosted by the parish Board of Trustees at the "Armenag Der Bedrossian" Hall for the Prelate, clergy members, Homenetmen Regional Executive, scout leaders and scouts, and youth group members.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿ ԿԸ ՅՂԷ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ԹԱՄ ԼԱՆԹՈՍԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Միացեալ Նահանգներու Ներկայացուցչական Տան Արտաքին Յարաբերութեանց յանձնախումբի ատենապետ՝ Ծերակուտական Թամ Լանթոս առյաւետ ննջեց Երկուշաբթի, 11 Փետրուար 2008-ին: Լանթոս մէկ էր քաղաքական այն անձնաւորութիւններէն, որոնք զօրավիգ կանգնեցան Հայկական Ցեղասպանութեան ճանաչման թիւ 106 բանաձեւին:

Այս տխուր առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը, յանուն Թեմիս Կրօնական եւ Ազգային Վարչութեան եւ Ժողովականութեան, ցաւակցական նամակ մը յղեց Ներկայացուցիչներու Տան Նախագահ Տիկին Նէսի Փըլոսիի: Սրբազանը վեր առաւ հանգուցեալին անկեղծ բարեկամութիւնը եւ աջակցութիւնը՝ հայութեան դատին, եւ իր արդար մօտեցումը Հայկական Ցեղասպանութեան անմեղ զոհերուն սկատմամբ:

PRELATE OFFERS CONDOLENCES ON THE LOSS OF CONGRESSMAN TOM LANTOS

It is with deep sorrow that we received the news of the passing of Congressman Tom Lantos, Chairman of the House Foreign Affairs Committee, which occurred on Monday, February 11th.

On behalf of the Prelacy Religious and Executive Councils and parishioners, the Prelate sent a letter of condolence to House Speaker Nancy Pelosi extending his sympathies to her and to the members of Congress. In his letter the Prelate eulogized Congressman Lantos as a friend of the Armenian people and a champion of human rights, and expressed gratitude for his vital role in the adoption of House Resolution 106 in recognition of the Armenian Genocide.